

տեղի ունեցած մեծ գաղթականութեան հոսանքին կը խառնուի նաեւ Չէլչպիի պապը ու իրեն բնակութեան վայր կ'ընտրէ Կելիպոլու քաղաքը, ուր կը ծնի Չէլչպիի հայրը՝ Մարտիրոս: Սա չորս տարեկան հասակին մէջ հօրմէն որբանալով, կը տարուի Պոլիս ու մինչեւ յարբունս հասնելը կը փոխէ շատ մը արհեստներ: Բարեկամներու յորդորանօք կը մտնէ աշխարհի կարգը կամ կ'ամուսնանայ ու ապա իր անդրանիկ որդւոյն՝ Երեմիայի ծնելէն երեք ամիս վերջ կնոջը քեռին՝ մահի: Ամբակումը կ'ուղարկէ զինքը Երուսաղէմ: Հոն երկու տարի մնալէն յետոյ քահանայ կը ձեռնադրուի պարոն տէր Գրիգոր պատրիարքէն ու անոր յանձնարարական գրով կը վերադառնայ Պոլիս: Այս մասին Չէլչպի իր «Օրագրութեան» մէջ կը գրէ հետեւեալը. «Այս քրիստոսասէր [Մհի. Ամբակում] առաքէ զհարազատն իմ յԵրուսաղէմ յետ ծնելոյ չուտիս ամսոյ երկոց, եւ գրէ առ հայրապետն [Պարոնտէր], զի ձեռնադրեաց քահանայ: Եւ յորժամ եկն՝ զամենայն ընթրիսն տեսեալ [Մհի. Ամբակումայ] թէ յանուն ննջեցելոց իմոց մատուցի պատարագը» (Օրագրութիւն թղ. 275 բ):

Չորրորդ տունին երկրորդ տողին խօսքը կը լուսարանուի Չէլչպիի «Օրագրութեամբ», ուր առաջ բերելով Փիլիպպոս կաթողիկոսին Պոլսէն մեկնելուն առթիւ 1653 Մարտ 26ին Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն մէջ Պոլսահայ ժողովուրդին խօսած հրատեչտի քարոզին բովանդակութիւնը, ի միջի այլոց կը գրէ. «Եւ վասն հարազատին իմոյ ասաց՝ թէ Տէր Մարտիրոսն Սուրբ Սարգսայ ինձ վէճել եւ աւագերէց Սուրբ Էջմիածնայ, որպէս զի ի վերայ գանձանակին լիցի եւ նորին ձեռամբն հասանիցի ինձ» (Օրագրութիւն թղ. 40 բ):

Ճա տունին 9ա տողին գերեզմ ուռնացեալ բառերը կը նշանակեն՝ Երեք արու զաւակները որոնք են՝ Երեմիա, Գէորգ եւ Տէր Կոմիտաս: Վերջնոյս համար է որ 10 տողին մէջ կը գրէ. «Երբիցս կրտսերն լեալ, կարգաւոր գտեալ»: Մենք գիտենք, որ Տէր Մարտիրոս ունեցած է նաեւ աղջիկ մը Երեմեկ անուն, բայց կ'երեւի թէ սա հօրմէն առաջ վախճանած է ուր չի մեղուի որբիս մէջ:

Այս տունին 11ա տողին՝ «Յերիցն մեծին»

այսինքն իրեն՝ Երեմիա Չէլչպիին «պտուղը» կամ որդին, որ կրօնաւոր եղած էր ու կը կոչուէր Գրիգորիս վարդապետ, ինչպէս գրած եմ:

Հոս ալ տուներուն սկզբնատառերը կը յօրինեն «Երեմիա», բայց ողբս չի յայտնէր թէ Տէր Մարտիրոս է՞րք է վախճանած:

1911 Մայիս 1ին Ամասիայէն Պոլս. Կարապետ Գաղապեան կ'ուղղէր ինձ նամակ մը, որով կ'իմացնէր թէ ունի Չեռագիր Տաղարան մը, որուն մէջ կը գտնուի եղբր Երեմիա Չէլչպիի Ս. Կոյս Մարիամու վրայ գրած մէկ Տաղը Հայերէնով եւ Թուրքերէնով, եւ կը խրկէր ինձ անոր մէկ օրինակը, զոր կը ներկայացնեմ թուրքերէն տողերը զուրս հանելով:

Երանեալ Կոյս սուրբ Տաղիթայ Մարիամ.
 Փրկչին մերոյ տուն եւ տեղի բնակութեան.
 Բարունոյն բան որ ի ծոց Հօր յառաջմէ,
 Նա հաճեցաւ մարմին առնուլ ի քենէ.
 Եկեալ հրեշտակն ետ զաւետիս ողջունի.
 Ի քեզ իջցէ ամենազօր սուրբ Հոգի.
 Մաքուր հոգոյդ մաքուր հոգի իջանի.
 Յայն ժամանակ անմայր ծնեալ Հօր ծոցի.
 Իսկուհի ծնունդ քո սուրբ եւ սիրալի,
 Ծառ կենաց զու ծաղիկ անթառամելի.
 Արդ սրբուհի գեղ լեզու դրվատէ.
 Զգեղեցկաչէն տաճարդ լուսոյ ո՞վ գովէ.
 Յարկ գերարբին Աստուածընկալ զու խորան.
 Սափոր ոսկին լցեալ առ քեզ մանանայն.
 Ի քեզ նայիմ ծնող անեղին մայր սուրբ կոյս.
 Բարեխօսեա՛ առ քո զորդին Տէր Յիսուս.
 Էյ հայրք եղբարք իղձս ո՛չ արգել յայսմանէ.
 Անմեղապիր լինել հայցեմ Ձեզանէ:

Դուրս երկարած տողերուն սկզբնատառերը վերէն վար կը յօրինին «Երեմիայի Է» խօսքը, եւ այս իսկ է Երեմիա Չէլչպիի ստորագրութիւնը, զոր տեսանք անոր գրած բոլոր Տաղանագիրներուն եւ Ողբերուն մէջ ալ:

Ս. Կոյսին նուիրուած այս գեղեցիկ Տաղով կը փակեմ Երեմիայի կենսագրութեան լրացուցիչ տեղեկութիւններս, աւելցնելով՝ թէ Տէր Մեսրոպ Սրբազան Նշանեան կը տեղեկացնէ ինձ, որ Երուսաղէմի ձեռագրաց Մատենադարանը Հայ Ամթեցի Մինաս Պա-

տրիարքին գրեթէ 25 տարուան ինքնազէր մէկ Օրագրութիւնը, որուն մէջ ՌձՆԵ (1696) Ապրիլ 2ին, Հեղինակը՝ Եւզոկիա գտնուած ժամանակ, յիշատակած է եղբր, նոյն օրը Կ. Պոլսէն ստացած մէկ նամակը՝ որ Երեմիա Չէլչպիի մահը կը գուժէր.
 Ահաւաստիկ այդ յիշատակութիւնը.

«ՌձՆԵ (= 1696) Ապրիլ Բ. օրն Հինգշաբթի, Ստամբուլու Բ. գիր Եկալ, մին պարուն Ալեքսանդր եւ մին Էֆիգէն. Սեբաստացի հայ մի երեք, եւ մեր յարութիւն գիր գրեալ ընդ քուրբի մի մարտ ժԸ.ին եւ Ալիքսանի գիրն Ի. Մարտին գրեալ, եւ լուսաբ ի գրոյն նոցա զմահ Բօմբուրնի Երեմիային»:

Երեմիա Չէլչպի Քէօմիւրճեան 1695ին մեռած է, ինչպէս գրած եմ (էջ 189), զո՛ւցէ տարւոյն վերջերը պատահած է անոր մահը, զոր ամիսներ յետոյ՝ 1696 Ապրիլին իմացած է Մինաս պատրիարք Ամթեցի. Կ. Պոլսէն է ստացած նամակներէ, որոնք չեմ կարծեր թէ ճիշդ Երեմիայի մահուան օրերը գրուած ըլլան:

ԴԱՏ. ՎԱՀՐԱՄ՝ Յ. ԹՈՐՊՈՄԵՆՍ



ՓՐԵՆՔՆԵՐ ԶՈՒՂԱՀԱՅ ԵՒ ՀՆԳԿԱՀԱՅ ԲԱՆԱՀԻՐԱՌԻԹԻՒՆՆԵՐ

(Տաղեր եւ ժողովրդական նրբեր):

2. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

ա. Հրածեշտ հարսի:

Արդ հրամանաւ Աստուածային
 Եկեալ բազումք ընդ փեսային,
 Կայեալ ձեռաց զիս կու տանին:
 Մնաք բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

Օրհնեա՛ գրուտոր քո ազնիւ հայր իմ,
 Մի՛ վշտանար, թէ բաժանիմ,
 Հայրական գութդ ի մտի ունիմ:
 Կեա՛ց զու բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

Օրհնեա՛ գրուտոր քո իմ անդին մայր,
 Որ շատ երկամբ զու զիս ծնար
 Եւ հոգ տարար ինձ մայրաբար:

Ահա՛ տամ քեզ քո բանալին,
 Ա՛ն զայս յինէն, տաս քո հարսին,
 Շատ են փականք տան փեսային:

Մա՛յր իմ, սիրես լոյս հաւատդ,
 Մի՛ մոռացես քո զաւակդ,
 Հալալ արա՛՛ ճերմակ կաթիդ:

Վաստակ կրեցիք, զիս պահեցիք,
 Մինչ ցայս հասակս ինձ հասուցիք,
 Ահա կամաւ զուք զիս թողիք:

Եղբար՛ք եւ քո՛րք իմ սիրական,
 Եւ ընտանի՛ք ինձ պատուական,
 Մի՛ մոռանաք ինձ յաւիտեան:

Յօրէ՛ յորմէ ծնայ յայս տան,
 Չէ՛ի մնալոց աստ յաւիտեան,
 Եղբարքս լիցին հաստ սիւն այս տան:

Արդ, օրհնութեամբ Աստուածային,
 Ամենեցուն զուտար եւ որդին,
 Արժան լիցին այս պսակին:
 Մնաք բարեա՛ւ, ես գնացի,
 Շատ խնդացի եւ շատ լացի:

բ. Եալալի:

Եա՛լալի, հայ ջանիման-ջանիման,
 Եա՛լալի, ջախտ արարին ջանիման.
 Եա՛լալի, պատկերդ ա աննման,
 Եա՛լալի, դէմք քո պայծառ փայլման:

Եա՛լալի, գլխիդ գաթաղուդ թեւն,
 Եա՛լալի, զու առ իմ սրտի մէջն.
 Եա՛լալի, զմիջերդ ա մանուշակ,
 Եա՛լալի, զո՛ր անմահական թոշակ:

Եա՛լալի, մանդիլդ ա նափրման,
 Եա՛լալի, թէ՛րդ պայծառ փայլման.
 Եա՛լալի, զմիջերդ ա աննման,
 Եա՛լալի, գլխիդ պատատ զոլման:

Եա՛լալի, յունքերդ ա թաղ տուած,
 Եա՛լալի, սրտիս մէջն զաղ տուած.
 Եա՛լալի, աչքէր ունիս ջէ՛րանի,
 Եա՛լալի, տեսնողի խելքն տանի:

Եա՛լալի, երբոր իշարաթ կանես,
 Եա՛լալի, սրտիս մէջը կը դադես.
 Եա՛լալի, յուշս գլխէս կտանես,
 Եա՛լալի, սաղ-սաղ ինձ կապանես:

Եա՛լալի, պունչկէրդ զրմզի,
 Եա՛լալի, ալամ դարձէլ ինդլիզի.
 Եա՛լալի, արբարթով գրուց տաս,
 Եա՛լալի, սիրով սրտիս նստած աս:

Ետ՛լալի, կեռքնիդ մարդարիտ ա,
Ետ՛լալի, տասնչորս տարիդ թամամ ա.
Ետ՛լալի, ում լայեղ ա, նա առնի,
Ետ՛լալի, ինչ կ'ուզենայ, նա կանի:

Ետ՛լալի, մատնումդ լի մատանի,
Ետ՛լալի, ինձ լայեղ ա, ո՛վ կտանի.
Ետ՛լալի, ձեռնիդ ոսկե արջան,
Ետ՛լալի, քո անունն ա գեղանուչ ջան:

Ետ՛լալի, աչրաֆիղդ ավագ ա,
Ետ՛լալի, ինչ շարթ կտաս արագ ա.
Ետ՛լալի, ձեռնեղդ նախշուն խինած,
Ետ՛լալի, խեղք ա խելագարած:

Ետ՛լալի, ոտնումդ ոսկե խալխալ,
Ետ՛լալի, խաղիդ շապիկն ա մալմալ.
Ետ՛լալի, ոտնեղդ կարմիր խինած,
Ետ՛լալի, տեսնողներն մոլորած:

Ետ՛լալի, սիրուն սուրայի գեարդան,
Ետ՛լալի, շուռ առ եկէլ հնդոտան.
Ետ՛լալի, քեզ սիրում ամ սրտովս,
Ետ՛լալի, որ միշտ վերցնես բարովս:

Ետ՛լալի, բոյդ նման սալբի ծառ,
Ետ՛լալի, ուզում ամ քեզ անդադար.
Ետ՛լալի, մէջքումդ ա շարքաղի,
Ետ՛լալի, քեզ տեսնողին երա՛նի:

Ետ՛լալի, կարմիր մաղարում քունն աս,
Ետ՛լալի, մտքով ինձ խեղ զարթունն աս.
Ետ՛լալի, թշնամուդ գրողն տանի,
Ետ՛լալի, շուտով ասենք. «մեռանի»:

Ետ՛լալի, խելօք անձանց միջուկն աս,
Ետ՛լալի, գովելի մէջլսուկն աս.
Ետ՛լալի, մեզ ո՛ւտ էր էդպէս բախտն,
Ետ՛լալի, նստինք էսպէս թախտն:

Ետ՛լալի, նասիւր լինի քամբախտին,
Ետ՛լալի, կենի մինչեւ միւս տարին.
Ետ՛լալի, քչերներ ես անքուն ամ,
Ետ՛լալի, ես քո սիրուց զարերուն ամ:

Ետ՛լալի, սպանէց էդ նոր խալն,
Ետ՛լալի, ե՛կ, տես իմ սրտի հալն.
Ետ՛լալի, ման աս գովման կրտերն,
Ետ՛լալի, որ ցոյց տաս քո պատկերն:

Ետ՛լալի, էս ինչ բանէր ամ լսում,
Ետ՛լալի, որ քեզ վերայ ան ասում.
Ետ՛լալի, Կալիթա ինչ խբար ա,
Ետ՛լալի, ինձ խամար մին ճար արա:

Ետ՛լալի, էս չեմ ուզում, էն կ'ուզեմ,
Ետ՛լալի, տէրտէրի աղջիկ կ'ուզեմ.
Ետ՛լալի, էս տարեքն շատ փոքր ա,
Ետ՛լալի, քո խօսքերն շատ քողցր ա:

Ետ՛լալի, ասածներդ շարեշար,
Ետ՛լալի, ուզում ամ քեզ անդադար.
Ետ՛լալի, մեծ յուսով ես կապտեմ,
Ետ՛լալի, որ քեզի ես գրանեմ:

3. ԵՐԳԻԾԱԿԱՆ

ա. Բիմուրվար բժշկանին:

Ես պիտի վեց ամսով, Յիսո՛ւս,
Տեղ ու բարձում հիւանդ մնամ.
էս իմ բոց կրակ խոցերու,
Բա՛, չկայ մին գեղ ու դարման:

Դեղ ու դարման բոլոր ցաւոց,
Ես քեզ ամ ճանաչում միայն.
Թէ կամենաս, կարես Յիսո՛ւս,
Տալ ինձ մին հանդիստ գերեզման:

Տէ՛ր, քաղանից թէ կեանք ուզեմ,
Կ'ասեն. դեռ աշխարհ ա սիրում.
Իսկ թէ համբերութիւն հայցեմ,
Կ'ասեն. Յոր դառնալ ա ուզում:

Ոչ էս ամ ուզում եւ ոչ էն,
էս վարձկան բժշկաց ձեռնէն.
Ճար ունիս, արա՛, ազատիր,
Թէ ոչ կենդանի կապանեն:

Դրսիցն տալման ան քաթան,
Ներսիցն երկաթ ու ծծումբ.
Որով ջերմ ու տենդ յաւել ան,
Վէրքսէլ բարձրացան թումբէ թումբ:

Ինչ լաւ, որ հասել ամ ցրտին,
Եւ պատասխանիլ բոլորին.
Թէ ոչ ծնկներս կ'կտրին,
էս բիմուրվար բժշկանին:

Հաւատամ, որ առանց դեղոց,
Դու ես բժիշկ վիրաց իմոց.
Ինձ նման ցաւազար շատոնց,
Գիտեմ, բժշկել աս, Յիսո՛ւս:

Բժշկութիւն տուր նախ հոգւոյս,
Որ մեղօք յաւել ա տանջման.
Ինձանում հաստատիր սուրբ յոյս,
Որ արդեանց խաչիդ հաւատամ:

Մարմինը փչանալոյ բան ա,
Հող ա ու հող պիտի դառնայ.
Տէ՛ր, ճար ունիս հոգւոյս արա՛,
Որ անմահիդ արեան գինն ա:

Թող աշխարհ ինձ տեսնելով՝ լայ,
Կորստական մեղաց վերայ.
Եւ շուտ իւր սուրբ հոգին հոգայ,
Տեղ ու բարձում զղջալն յեա ա¹:

¹ Տե՛ս «Ազգասէր» 1846, Թիւ 26:

բ. Պարսաւ պոռնիկ քահանայի:

Ա՛յի ժամարար, ժամարար,
Դու փուչ հարսից կամ արար.
Մին պատիկ փոքրաւոր իր,
Չանարժան կարգաւոր իր,
Վար հարսից հետ սաւոր իր,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Ինչ աղարկէլ իր սառէց,
Տես վեր կացիր, ե՛կ յառէջ.
Քո նազն իմ հողին առէց.
Ա՛յի ժամարար, ժամարար:

Կանչ աղարկեցի, տան չէր,
Ինձանէ անարժան չէր.
Աղարկածէդ ամանչէր,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Ո՛վ բամբասի ախ չտաս,
Մեղաւորաց թաս չտաս.
Առանց ժամուց պաչ չտաս,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Նազով հողիս առման ա,
Խօսման տեղն վառման ա.
Մէլ խրուչակ սառման ա,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Գրքեր շարէլ խցունն,
Գիշերէքն դրուցունն.
Վաղէն մին գրուցունն,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Ժամ կասես արարարով,
Պար կգոս մարիֆաթով.
Խաղ կկանչես ահիթով,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Փուչ խարոնէրի խարեցիր,
Տարար խցում գաղեցիր.
Չոք հոգու դաղդաղեցիր,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Աս ա քերէցն ախ տվէց,
Գուշա քաշվէց, վախ տվէց.
Փալաղանէն կախ տվէց,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Գանգատ գնացին վանքն,
Կէրաք բօստանի ցանքն.
էտ չէր սիրելեցաղ կամքն,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Ո՛չ տան կկաս, ո՛չ ժամում,
Գիշեր, ցէրէկ լէվ բանում.
Առ տէրում, բիարանում,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Գիշերով ձեր տուն բան գոմ,
Ա՛յի վեռում քե սան գոմ.
Մին պաչեմ, գլխովդ ման գոմ,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Շիշով գինին թափեցիր,
Ա՛յի ջրումդ գաղեցիր.
Արեղին խօշ դաղեցիր,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Սիրելեաց քո խարեցիր,
Մարդարթէ հար տվիր.
Փախար ձիան լազ տվիր,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Դու փառաւոր քահանայ,
Խոստովանքն մահանայ.
Ժամի վախտ սարգէզան ա,
Ա՛յի ժամարար, ժամարար:

Սօֆում նստած իր սագով,
Գիւրն չափում բողազով.
Չգեստ առիր դու նազով,
Ա՛յի ժամարար, ժամարար,
Դու փուչ հարսից կամ արար:

գ. ԱՅ վարագ:

Սիրտս լի ա, միտքս մոլոր,
Ա՛յի քաշելս էլ բավական չի.
Ման ամ գոլման օրն բոլոր,
Չրայ գառ վարագս ծախման չի,
Ա՛յ, վա՛յ, ա՛յի գառ վարագ:

Ի գուր տեղ կկանքս մաշման ա,
Համբերելն ամէնու բան չի.
Բաֆէր բաղդն ինձ խեղ դուշման ա,
Վասն էն վարագն ծախման չի,
Ա՛յ, վա՛յ, քաֆէր գառ վարագ:

Մոնչ ունեմ փող եւ ոչ քունն,
Բիւխէր ձեռնի տէրն ամանչի,
Որ ուզում ա աստղի յունքն,
Մինչ իւր գառ վարագն ծախման չի,
Ա՛յ, վա՛յ, բիւխէր գառ վարագ:

էս չի միայն, լաւ դիտացէք,
Մուղաթ տալն եւս խեղ բան չի.
Դօսալար դուք էք ինձ խէտ լացէք,
Չունքի գառ վարագս ծախման չի,
Ա՛յ, վա՛յ, անձախ գառ վարագ:

Օվ տալիք ա, փող չի տալման,
Պարաք առելուցն էլ վախման չի.
Երբ ուզում ամ, սուտ ա լալման,
Չառ վարագս էլ խօ ծախման չի,
Ա՛յ, վա՛յ, լալման գառ վարագ:

Նսեայ առման ան, նաջդ ծախում,
Խմում ան էրագ ու գինի.



Խալիսի փողէր ձեռնում պախում,
Ձառ վարազի տէրն ի՞նչ լինի,
Ա՛յ, վա՛յ, քամբախտ զառ վարազ:

Բռնէլ ան բարմէքոնց ծէսն,
Երբ գորման ան չորութ ուզում.
Կամք չունեն տալ մայրս կէսն,
Ձառ վարազին գինն ին՝ զգում,
Ա՛յ, վա՛յ, զգած զառ վարազ:

Ի՛նչ իրաւունք, ի՛նչ դատաստան,
Ես էլ մին բարաթ երկիր աս.
Երբ փողդ ուզես օրէնք վազ տան,
Ձառ վարազիս ծախսն խօ գիր աս,
Ա՛յ, վա՛յ, խղճուկ զառ վարազ:

Առման չեն ո՛չ մարդ եւ ոչ կին,
Յամենայն տեղ ջանքս մին աս.
Որպէս Ռանգուն հալայ շողին,
Ասելով զառ վարազս խին աս,
Ա՛յ, վա՛յ, գուման զառ վարազ:

Նստէք սեղան, լցէք գինի,
Ձար կամողաց մեղքն ներենք.
Ղարիթ Թամին բարի լինի,
Ձառ վարազիս գիրն գրեմք, ամէն:

դ. Գանգատ մկնբից:

Եկայք եղբարք դանդառ առեմ,
Ես էս գալում մկանց ձեռնէն.
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն,
Իլայի ձագերի ձեռնէն:

Յարակուն, որ կնկանէր մութն,
Հրէս եկին օխտն-ութն.
Կտրեցին խիզանիս զութն,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Մեծ մուկն դռան չօքէլ էր,
Դուռն կրնկէն պոկէլ էր,
Ինչ կայ, չկայ կոկէլ էր,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Հրէս եկա՛ւ մին մեծ սէֆն,
Հէնց կնմանէր Ալայ դեւն.
Տարաւ ընկերիս մին թեւն,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Լուսնեակն ընկաւ վերայ բաշին,
Վերայ տվին թոնդրա խաշին.
Քաշ-քաշ տարան եղան կաշին,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Մին տուն ունինք պատիկ տուն աս,
Երկու գերան եւ չոք սուն աս.
Չորս հալալէն մկան բուն աս,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Ոչխարն կապէլ ինք սունըն,
Հէնց թափ տվէց թնդած տունն.
Մեծ մուկն առավ փախաւ բունն,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն:

Գղալով բաժանում են եղն,
Քանդեցին Դարբնի գեղն.
Կուռծեցին ընկերիս բեղն,
Հարա՛ մաղաթ մկան ձեռնէն.
Իլայի ձագերի ձեռնէն:

4. ՄԻԻՍ ԵՐԳԵՐԸ

ա. Իմ դայլան:

Երբ իմ տան Փիքըն միտս աս ընկաման,
Հեռի բարեկամք իմ միտն ան գորման,
Ի՞նչ իքմինով աս իմ միտք սփոփման, —
Իմ դայլան:

Առանց բարեկամ երբ ես մինէկ ամ,
Եւ գրքից զուրկ ամ, որ նստեմ կարգամ,
Մինէկութենումս դո՞ր ամ ես խնդման, —
Իմ դայլան:

Երբ լըջութիւնս գինուով աս բարձման,
Եւ վայելք տարիք շուտ աս սկսման,
Ի՞նչ իքմինով ամ հանգիստ դտաման, —
Իմ դայլան:

Կամ երբ վաստակով բանի ամ կալման,
Եւ անջաղտ դրիտտ շահ ամ գտաման,
Դու աս ջալդաստի հարայիս խսաման, —
Իմ դայլան:

Կամ երբ սեփառին նխտից ընկաման,
Եւ բուռնք սիրտս ու տամարս ան շարժման,
Ա՛յ քեզ էն վախտն քոխցր ամ գտաման, —
Իմ դայլան:

բ. Նաշխն:

Երբ թամամ օրն ջաֆայ եմ քաշած,
Բիհալ ու նախօջ ու նխտած նստած,
Ո՞ւհ, ո՞վ սփոփէ սիրտս թոմոշկած —
Իմ նաշխն:

Մեծ արեգակն երբ մէր աս մտման,
Տիրութեան խաւարն ինձնով աս պատման,
Ի՞նչ իքմինով աս սիրտս թաղաման, —
Իմ նաշխն:

Երբ չուսիչափ նստած յիրար անք տեսնում,
Էնպէս դոր իրաւ հրեշտակ աս գնում,
Ի՞նչ աս տրփքի ուրախ ձէն հանում, —
Իմ նաշխն:

Եւ երբ իմ անցեալ ջաֆէքն ամ յիշում,
Ձեռս երեսիս նստած ամ տրտում,
Ի՞նչ զատ աս սիրտս ուրախացնում. —
Իմ նաշխն:

Եւ երբ կաւալն, ոէն, նա եւ բերին,
Յիրար հետ ոչինչ ասուլիս չունին,
Ի՞նչ աս կուլացնում յիրար հետ մէջին, —
Իմ նաշխն:

գ. Խրատի ձեւ մկարագրութիւն:

Սիրելի որդի՛, ծեր հօրդ լսի՛ր,
Ինչ որ քեզ կ'ասեմ, քո մտնին պախիր.
Որտեղ որ պէտք գոյ, գործածմամբ յիշիր,
Ասա՛. ողորմի, որ խրատեցիր:

Ես էնպէս հայր չեմ, որ որդուս ասեմ,
Եւ անմեղ տեղն իրուր գրպարեմ.
Ինք ինչ որ մեկն աս, ես քեզ էն կ'ասեմ,
Որ յետ քննելէդ կ'ասես, արդար եմ:

Դու այժմ որ կամիս գնալ յաշխարհ Հնդկաց,
Պիտի կիրթ լինես բարուց եւ կարգաց.
Յատկապէս համայն մայրաքաղաքաց,
Որ անդ վարելիս գերթ մի ի բնակչաց:

Արդ, որովհետեւ դու դեռ տեղեակ չես,
Կարճ եւ համառօտ մէկն պատմեմ ես.
Ծանօթդ կղայ բարով, որ տեսնես,
Խորթ չի թվալէց, զոր ինչ որ գիտես:

Բուժբայի հայոց համալսարանն է,
Հօր գրաւոր որդիք սա ունէ.
Մաղբաս մեր ազգի ուսումնարանն է,
Ազգասէր որդիք սա բազում ունէ:

Կալկաթա մեծ աս, յատկացեալ բան չկայ,
Ամենայն տեսակ զաւակ իւրնում կայ.
Թէ գլխաւորն մինն կամենայ
Գիտել, անվաստակ անձինք անդ յոյժ փոքր կայ:

Սուբաթ եւ Դաքայ զանազան ան,
Քուրթի պէս կ'ասեն արէ միայ ջան.
Նաշխ յետ հաշտ ան, բալի հետ քէն ան,
Ինդլիդին ատում, սէվին սիրում ան:

Էհէ խօսի բացվէց, ինձ լսի՛ր ըլլայ,
Նաշխ եւ բալի յատկութիւնն էս աս.
Նաշխն յատուկ պար գոլոցօղ կայ,
Բալի պարունն խաթուն պարուն աս:

Մարդ կայ խօջ կառի նաշն եւ ոսնդն,
Եւ կայ կ'հանի բայ եւ սպրբըն.
Համէքն յատուկ իրաւունք ունեն,
Ես այժմս կ'ասեմ, տես որն ուղիղ են:

Բալունն բոլորն լէվ կ'զարգարվեն,
Խաթուն եւ պարուն միմեանց հէնդ կ'առեն.
Ձուարթացուցիչ բէնդն կ'սկսեն,
Կարգաւոր կերպիւր գէս գէն կ'թռնեն:

Սաղի եւ ոտնի ձէնն մին կերպ աս,
Պատճառն տային, որ միեւնոյնն աս.
Թէ եւ Փիքըն շատ դանաղան աս,
Բայց վարժից համար շատ մին հեշտ բան աս:

Թէ եւ մին անծանօթ սարցի տեսնի,
Գոժվիլ են հատոնք շատ շուտով կ'ասի.
Բայց եթէ մին ողջ խասկացանի,
Շուտ մեղայ կտայ, կ'ասի. սխալ է:

Քանդի էս պարն, որ բալ ան ասում,
Շատ արուեստով աս, որ է մին ուսում.
Պիտի դաս առնել դպրատան միջում,
Առանց վարպետի մին բան չի ելնում:

Բալ եւ սպրունն պիտի զգաստ կալ,
Որ չննի մինն լինի խոփոռեալ.
Քանդի հանդէսն ուսեալ խալի աս,
Անկերպ վարք եւ բանն անդոյժ սխալ աս:

Ըլլայ գո՞մ որդի նաշի կերպն ասեմ,
Շատ կերպղկերպ աս, ես որն պատմեմ.
Ընդհանրական օրէնքն էս աս,
Որ պար գոլոցօղն յատկացեալ անձն աս:

Սաղն եւ հանդն շատ հին մնացած աս,
Աձեւ եւ կանչելն շատ կարգաւոր աս.
Նոյնպէս եւ պարն արուեստակերպ աս,
Բայց խաղն եւ ձեւն կարի անկերպ աս:

Պար գոլոցօղն նազը դուզ կ'անի,
Ձանազան կերպով միշտ կ'կոտորալի.
Աչկով եւ յունքով, ձեռնով եւ դէմքով,
Բան կ'խասկացնի, սուտ կիրք ցոյց տալով:

Ասա՛ ինձ, տեսնեմ, պարն որ էս աս,
Էս իքմինն ինչ գովական աս.
Ես կ'ասեմ. երբեք քաւ եւ մի լիցի,
Որ առաքելին էս նաշին գովի:

Միհ լէվ բան ասեմ, որ շատ արդար աս,
Որտեղ լէվ լինի, որտեղ վատ, մին աս.
Թէ լէվն վատում, թէ վատն լէվում,
Անդ նշանց կտայ, զոր ինչ կայ իւրնում:

Վատն որոյ ասեմ դարձեալ էս բանն,
Թէ վատն գնայ սրբակերպ բանն.
Կամ լէվն գնայ պղծակերպ նաշն,
Լէվն միշտ լէվ աս, վատ աս միշտ վատն:

Բայց եթէ մինն իրաւամբ խօսի,
Պիտի խամխայ նաշին նախատի.
Քանդի սկզբունքն մի զսայ գրգիւ աս,
Եւ բալինն լով փաղաքական աս:

Էստոնք լսեցիր, էս եւս լսիր,
Իրան ամ ասում, դու աստ ինձ միտ դիր.
Թէ նաշ ցանկացող, թէ բալ ցանկացող,
Թէ պատճառ լինի, կ'լինի կատարող:

